արդիւնք է, ուղղակի կրից յուզման կամ զգացման մը թարգմանը չէ. և այս մասին ստորագաս է չորքոտանեաց ձայնին որ փոխնիփոխ զայրոյթ կամ հեշտութիւն, սէր կամ ատելութիւն կը բացատրէ։ Բայց այս ձայնն ալ երաժշտական չէ. իսկ մարդկային ձայնը ոչ միայն շեշտերու զանազանութեամբ, ընդարձակութեամբ և անհամար երանգներով հոգեկան յուզմանց ազդու թարգմանն է, այլ նաեւ անոր երաժշտական կնիքը յատակութեամբ և գեղեցկութեամբ գեր ի վեր է քան բնութեան և արուեստին արտադրած ամէն ձայները։ Մարդկային երգը այնչափ վեր է թռչնոյն երգէն որչափ մարդկային հոգւոյն իմացական ներշնչութիւնը բնազդման կոյր մղումէն վեր է։

Այսպէս ահա գեղեցկութեան աղբիւրները կ՝առատանան որչափ կը բարձրանանք կենդանական դասերէն և յետոյ լրումը կը գտնեն մարդուն մէջ, երկրաբնակ արարածոց գեղեցկագոյնը։

Թ. ԹԷՐԶԵԱՆ

Շարայարելի

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԹՆՈԼՈՐՏԻ ՆՈՐ ԿԱԶԵՐԸ

ԱՎՈՒԱԶԻԷԻ գիւտէն վերջը համոզուած էինք որ մեր շնչած օդը բաղադրութիւն մ՝է 21 մաս թթուածին և 79 մաս բորակածին կազերու։ Բայց երկու հմուտ անգլիացւոց, Լորդ Rayleigh-ի և William Ramsay-ի ապացոյցներով՝ քանի մը տարի առաջ ծանօթացանք, որ օդը կը բովանդակէ նաեւ ուրիշ տարր մը, որ է արգոն (argon)։

Անցեալ տարի Պ. William Ramsay գործակցութեամբ Պ. Morris W. Travers-ի գտաւ և հրատարակեց թէ օդը նոր տարր մ՝ալ կը բովանդակէ, որոյ անուն դրաւ (Krypton) Քրիփթօն — պահուրտող կազ — և վերջապէս հասկըցուց՝ որ այս քրիփթոնի մէջ կը բովանդակուին երկու ուրիշ կազեր եւս՝ որոնք կոչուեցան néon և métargon.

Այս երկու գիտակցանք հեղուկ օդը[1] թանձրացնելով գտան իրենց նոր և շահաւէտ գիւտը։ Ցետ բորակածնի և թթուածնի շոգիացման, որոնցմէ առաջինն — 191° և երկրորդը — 184 աստիճան զրոյէ վար կը շոգիանան, ամենին յատակը մնաց՝ քանի մը հարիւրորդամեղր բարձրութեամբ հեղուկի մը, որ կազմուած էր՝ տասնին 9 մասը արգոնէ և 1 մասը անծանօթ իրէ մը։

Անոր լուսապատկերական վերլուծութիւնը (analyse spectrale) ընելով տեսնուեցաւ որ ընդունուած լուսապատկերի գիծերը և գոյները բոլորովին կը տարբերին թթուածնի, բորակածնի և արգոնի և ուրիշ ծանօթ մարմնոց լուսապատկերի գծերէն, որով հաստատուեցաւ թէ գտնուածը բնալուծական նոր մարմին մ՝էր. որ կոչուեցաւ քրիփթօն։

Իսկ Նէօն կազը կը տարբերի ուրիշներէն իրեն լուսապատկերական բազմաթիւ և շատ ուժով նարնջագոյն և դեղնագոյն և քանի մը մութ մանիշակագոյն գծեր ունենալովը։ Այս կազը միհիւլէական (monoatomique) է։

Մէթարկօն ալ նէոնի յատկութիւնները ունի, ասոր խտութիւնն է 19,87, որ արգոնի եռացման ջերմաստիճանն ունի, հաստատուն մարմին կ՝ըլլայ, որով ամենամաքուր և զուտ կերպով զայն կ՝ընդունինք։

Ինչ բաներու պիտի ծառայեն ասոնք։

Դեռ չի գիտցուիր, բայց անշուշտ մարդկային հանճարը քիչ առնէն պիտի կարենայ զայնս գործի բերել և օգտուիլ անոնցմէ, ինչպէս կ՝օգտուի ամեն տեսակ կազերէ և իրերէ։

Ուրեմն՝ մեր բնակութեանց օդոյ մէջ կը գտնուին, թթուածին, բորակածին, արկօն, քրիփթօն, նէօն, մէթարկօն, ջրային գոլորշի, մանրէներ, բուսական և հանային փոշիներ և այլ իրեր։

---

1. Տես ասոր ընդարձակ տեղեկութիւնը՝ Բազմավէպի 1898ի դեկտեմբերի թերթին մէջ։

digitised by A.R.A.R.@